ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 18 հոկտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ս. Սաֆարյանի
Անդամակցությամբ՝ Հ. Թովմասյանի
Ա. Վաղարշյանի

Քննության առնելով «ԵՂԻՇԵ ԲԱԲԱՅԱՆ ՆՈՐԻԿԻ» ԱՁ անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «ԵՂԻՇԵ ԲԱԲԱՅԱՆ ՆՈՐԻԿԻ» ԱՁ (այսուհետ նաև՝ Դիմող, ներկայացուցիչ՝ փաստաբան Վանիկ Մարգարյան) դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2024 թվականի հոկտեմբերի 2-ին, որով Դիմողը խնդրել է.

««Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 79-րդ և 60-րդ հոդվածներին հակասող»:

2. Ներկայացնելով թիվ ԵԴ/26448/02/21 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ ապրանքային նշանի գործողության երկարաձգման և դրա համար պետական տուրքի վճարման գործողություններն ինքնին բացառում են ապրանքային նշանի իրավատիրոջ կողմից ապրանքային նշանից հրաժարվելու փաստի առկայությունը և այդ գործողությունները, որոնք թեև նախատեսված չեն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով որպես ապրանքային նշանի գրանցման չեղյալ ճանաչման մերժման հիմք, սակայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կարգավորումների համատեքստում նման պահանջը մերժելու հիմք են, քանի որ ակնհայտորեն վկայում են իր սեփականությունից անձի հրաժարման փաստի բացակայության մասին:

Դիմողը պնդում է, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով սահմանված՝ «ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված» արտահայտությունը պետք է ավելի լայն մեկնաբանել, և բոլոր այն դեպքերում, երբ իրավատերը ակտիվ գործողությունների շնորհիվ երկարաձգում է ապրանքային նշանի գործողության ժամկետը, չեղյալ ճանաչման հիմքերի առկայության համար հաշվարկը պետք է կատարվի երկարաձգման գրանցումից հետո:

Դիմողը գտնում է, որ Մտավոր սեփականության գրասենյակը՝ ապրանքային նշանի գործողության երկարաձգման դիմումի հիման վրա, իրականացնում է տվյալ ապրանքային նշանի գործողության երկարաձգման գրանցում, նոր պահպանության ժամկետի մասին գրառում է կատարում գրանցման տվյալներում, հետևաբար՝ երկարաձգումն ինքնին հանգեցնում է փաստացի նոր գրանցման, որը թեպետ չի նույնանում ապրանքային նշանի առաջնային գրանցման հետ, սակայն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածում չի նշվում՝ ապրանքային նշանի ո՞ր գրանցումից հետո պետք է հաշվարկել նշված ժամկետը: Հետևաբար՝ ապրանքային նշանի գործողության երկարաձգման գրանցման դեպքում, ըստ Դիմողի, չեղյալ ճանաչման հիմքերի մասով չօգտագործման ժամկետի սկիզբ է համարվում երկարաձգման գրանցման օրը, որի պարագայում թիվ ԵԴ/26448/02/21 քաղաքացիական գործով հայցը ենթակա է մերժման, քանի որ երկարաձգման գրանցումից չի անցել օրենքով սահմանված ժամկետը, և ապրանքային նշանի գրանցումը չեղյալ ճանաչելու

հիմքեր առկա չեն: Հավելելով՝ Դիմողը նշում է, որ հակառակ մեկնաբանությունը հակասում և խախտում է Սահմանադրության 60-րդ հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքը:

Դիմողն ընդգծում է, որ տվյալ դեպքում «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով սահմանված հիմքը, ըստ թիվ ՎԴ/0823/05/14 վարչական գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի նախադեպային որոշմամբ արտահայտած դիրքորոշումների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ անձի կողմից իր սեփականությունից հրաժարվելու դրսևորման եղանակ է: Հետևաբար՝ Դիմողի պնդմամբ՝ այն դեպքում, երբ անձն իր ակտիվ գործողություններով երկարաձգել է ապրանքային նշանի գործողությունը, ակնհայտ է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով վերջինս չի կարող համարվել իր սեփականությունից հրաժարված: Հակառակ մեկնաբանությունը, ըստ Դիմողի, կխախտի Սահմանադրությամբ երաշխավորված անձի սեփականության իրավունքը:

Ամփոփելով՝ Դիմողը եզրահանգում է, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը չի համապատասխանում Սահմանադրության 1-ին, 60-րդ և 79-րդ հոդվածներին՝ «օգտագործել» հասկացության թերի լինելու իմաստով:

Միաժամանակ Դիմողն իր անհատական դիմումի շրջանակներում ներկայացրել է «Դիմում ներկայացնելու համար սահմանված ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին» միջնորդություն:

3. Ուսումնասիրելով դիմումն ու կից ներկայացված դատական ակտերը՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահ-

մանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 69-րդ հոդվածի 1-ին մասում, որտեղ սահմանվում են այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում՝ նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված **այլ դեպքերում:**

Օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումները կարող է Սահմանադրական դատարան ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը դատական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելուց՝ **վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո:**

Օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն նույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները, կամ **լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը:**

Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ դատարան դիմելու օրենսդրական ժամկետները, այդ թվում՝ Օրենքով Սահմանադրական դատարան դիմելու համար սահմանված ժամկետային սահմանափակումը, նպատակ ունեն ապահովելու իրավունքների դատական, իսկ տվյալ դեպքում՝ Սահմանադրական դատարանի միջոցով դատական պաշտպանության արդյունավետությունն ու դատական միջոցների խնայողությունը, երբ մի կողմից՝ անհատական դիմումի առարկա հանդիսացող սահմանադրական իրավունքի առերևույթ խախտման հանգեցրած օրինադրույթի և (կամ) իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության ենթադրյալ հակասահմանադրականության հարցի քննությունը տեղի է ունենում ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատական համակարգի կողմից անձի իրավունքներին վերաբերող եզրափակիչ և վերջնական դատական ակտի հրապարակումից հետո հնարավորին սեղմ ժամկետում՝ այդպիսով նպաստելով անձի սահմանադրական իրավունքներին ենթադրյալ ոչ իրավաչափ պետահիրավական միջամտության վերացմանը և ելնելով Սահմանադրական դատարանի սահմանադրական կարգավիճակից՝ նաև հակասահմանադրական օրինադրույթի կամ դրանց տրված իրավամեկնաբանությանը՝ իրավական համակարգից բացառելուն, իսկ մյուս կողմից՝ տվյալ դեպքում Սահմանադրական դատարանի սահմանադրական գործառույթների իրացման ժամանակային որոշակիությանն ու կանխատեսելիությանը թե՛ հենց Սահմանադրական դատարանի, թե՛ դիմող սուբյեկտների համար: Ընդ որում՝ դատարան դիմելու դատավարական ժամկետներն իրավական վեճի համար էական լինելու և գործի ելքով դատավարական սուբյեկտի իրական շահագրգռվածության ցուցիչ են:

Սույն գործի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ սույն անհատական դիմումի շրջանակներում թիվ ԵԴ/26448/02/21 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտը՝ Վճռաբեկ դատարանի՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը, կայացվել է **2024 թվականի հունվարի 10-ին:**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ ՆՕ) 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը **հաջորդ օրվանից**, որով որոշված է դրա ժամկետի

սկիզբը: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի **վերջին ամսվա համապատասխան ամսաթվին**: **Կես տարով որոշված ժամկետի նկատմամբ կիրառվում են ամիսներով հաշվարկվող ժամկետների կանոնները:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն անհատական դիմումի շրջանակներում թիվ ԵԴ/26448/02/21 քաղաքացիական գործով **վերջնական դատական ակտը կայացվել է 2024 թվականի հունվարի 10-ին**՝ Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ Դիմողի՝ Սահմանադրական դատարան դիմելու համար Օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված **վեցամսյա ժամկետի ընթացքն սկսվել է 2024 թվականի հունվարի 11-ից:**

Սույն գործով Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետն ավարտվել է 2024 թվականի հուլիսի 11-ին: Մինչդեռ Դիմողի անհատական դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2024 թվականի հոկտեմբերի 2-ին (փոստային ծառայությանն է հանձնվել 2024 թվականի սեպտեմբերի 30-ին): Հետևաբար՝ Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ Դիմողը բաց է թողել, և սույն գործով լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար սահմանված վեցամսյա ժամկետը, որն էլ անհատական դիմումով գործի քննությունը մերժելու հիմք է:

Ինչ վերաբերում է Դիմողի կողմից սույն անհատական դիմումի շրջանակներում ներկայացված՝ «Դիմում ներկայացնելու համար սահմանված ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին» միջնորդությանը, ապա Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ Օրենքով Սահմանադրական դատարան դիմելու բաց թողնված ժամկետի վերականգնման կառուցակարգ նախատեսված չէ, ինչը, հիմք ընդունելով նաև Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված պահանջը, զրկում է Սահմանադրական դատարանի դատական կազմին Օրենքով չնախատեսված իրավական կառուցակարգերի կիրառման հնարավորությունից:

Ընդ որում՝ Սահմանադրական դատարանը նախկինում անդրադարձել է սույն իրավական խնդրին: Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանը 2021 թվականի հունվարի 15-ի ՍԴԱՈ-8 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ

«(....) ի տարբերություն քաղաքացիադատավարական, վարչադատավարական և քրեադատավարական օրենսդրության՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը Սահմանադրական դատարան դիմելու բաց թողնված ժամկետը վերականգնելու ինստիտուտ չի նախատեսում»: Նշյալ դիրքորոշումը Սահմանադրական դատարանը վերահաստատել է նաև 2022 թվականի ապրիլի 12-ի ՍԴԴԿՈ-20 դատական կազմի որոշմամբ:

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն **դիմումով չի պահպանվել** Օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով անհատական դիմումին ներկայացվող՝ այն **վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո Սահմանադրական դատարան ներկայացնելու պահանջը,** ուստի՝ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը **ենթակա է մերժման:**

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

«ԵՂԻՇԵ ԲԱԲԱՅԱՆ ՆՈՐԻԿԻ» ԱՁ անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Ս. Սաֆարյան

Անդամներ՝ Հ. Թովմասյան

Ա. Վաղարշյան

18 հոկտեմբերի 2024 թվականի
ՍԴԴԿՈ-59